ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ 10 հուլիսի 2023թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 14-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Վարազդատ Մխիթարյանը, Սամվել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Նունե Էհտիբարյանը, Զալիկո Համբարյանը, Կարինե Դիլաքյանը, Վաչիկ Գրիգորյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 13 անդամներ՝ Համլետ Մազմանյանը, Գևորգ Մարգարյանը, Վարդուհի Թումանյանը, Արամայիս Փիլոյանը, Արամ Կարապետյանը, Վահե Ղազարյանը, Նարինե Հակոբյանը, Արկադի Ասատրյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Աննա Ալթունյանը, Գուրգեն Փիլոյանը, Մանուշ Աթյանը /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 10-ի նիստի օրակարգի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 10-ի արտահերթ նիստի օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունելու մասին

2)Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

3) Սպիտակ համայնքի 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությանը (հողային հաշվեկշռին) համաձայնություն տալու մասին

4)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

5)Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրից օգտվելուն համաձայնություն տալու և վճարի չափ սահմանելու մասին:

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները- ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1.ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ:

Քննարկելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն թիվ 1-5 հավելվածների:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

2.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն 1-2 հավելվածների:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

3. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ) ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թրվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությանը (հողային հաշվեկշռին)՝ համաձայն հավելվածի (22 և 22ա ձևեր):

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

4.ԼՍԵՑԻՆ«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. փետրվարի 21-ի N 09-Ն հրամանը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման թիվ 2 և թիվ 4 հավելվածները հաստատել նոր խմբագրությամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

5.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սամվել Գաբրիելի Մաթոսյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0545-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,7307 հեկտար մակերեսով 2-րդ կարգի արոտավայրից (համաձայն հատակագծի) օգտվելուն:

2. Արոտավայրից օգտվելու վճարի չափ սահմանել տարեկան 2740,2 ՀՀ դրամ, (ամսական վճարի չափը՝ 228,35 ՀՀ դրամ), տրամադրման ժամկետը՝ 3 տարի:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ